Դատաւորն սակս նորոգութեան Զիթենեաց լերին, և ըղմիւսն սակս չգործադրելոյ զհրովարտակն Լատինաց։

Փոխանորդն Հայոց, բողոք բառնան Ցոյնք թէ կանթեղք և պատկերք որք կախեցան յեկեղեցին Բեթղեհէմի, իցէ լեալ միայն շնորհիւ Դատաւորին, և ոչ իրրեւ սեփհական իրաւունք Հայոց, և չէ տուեալ Հէօճմէթ 'ի Դատարանէ։ Այլ սակայն վասն գործադրութեան բաժանորդութեան Հայոց՝ ոչ երբէք պակասեցան վէճք և խռովութիւնք 'ի կողմանէ Ցունաց։ Եւ 'ի ՌՂԹ թուին եղեալ արձանագրութիւնն մատուցաւ առ Փոխարքայն Եգիպտոսի, և նա գրեաց առ Դատաւորն Երուսաղէմի գործադրել զբաժանորդութիւնն ըստ մտաց հրովարտակին Հայոց։ Եւ իրրեւ ընթերցաւ այն 'ի Դատարանի՝ Ցոյնք վերստին յարուցին վէճս և խռովութիւնս, և եղեւ քննութիւն յերկուց կողմանց, եւ Դատաւորն առաքեաց զարձանագրութիւնս դատաստանին առ Փոխարքայն, և 'ի պատճառս խռովութեան պատերազմին անկարելի եղեւ ընդունիլ ըզպատասխան նորին իրրեւ զամ մի։ Եւ 'ի կարգիլ Դատաւոր Երուսաղէմի Օմար Նասիպ էֆէնտեայ 'ի ՌՂԵ թուին՝ մատուցաք նմա զհրամանագիր Փոխարքային, եւ ապա խնդրեաց զհրովարտակն բաժանորդութեան, եւ յետ ընթեռնլոյ առաջի մեծամեծաց քաղաքիս եւ Ցունաց՝ համութեամբ և հաւանութեամբ նոցին, կախեաց զկանթեղս և զպատկերս։ Ցոյնք ունէին յԱյրին Ծննդեանն Քրիստոսի պատկերս 11, Հայք բողոքեցին ըստ իրաւանց բաժանորդութեան տալ ինքեանց զկէս նոցին, ընդ որ տհամեալ՝ կախել տալ կամեցան 'ի ներքոյ պատկերաց նոցին, այլ Հայք ոչ առին յանձն՝ և մնաց այնպէս։

Եւ պատճառ չտալոյ մեզ Հէօճմէթ 'ի Դատարանէ՝ զի ոչ կարացաք լցուցանել զթերին բաժանորդութեան, զի զոմանս արար, և զայլս եթող, եւ մեք ոչ կամեցաք ընդունիլ զՀէօճմէթն, թէպէտ Դատաւորն քանիցս ազդ արար մեզ առնուլ։ Եւ իրրեւ մերձեցաւ ժամանակ մեկնելոյ նորա յԵրուսաղէմէ՝ կամեցաւ խանդարել զսր արար յեկեղեցւոջ անդ, և Քաղաքապետն ոչ կամեցաւ երթալ 'ի կոչ նորա, այլ արար պատասխանի՝ թէ գիտութեամբ և հաւանութեամբ ամենեցուն եղեալ իրաց չկամիմ լինել